ԱՂՁՆԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԸ XIX-XX ԴԱՐՈՒՄ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ինչպես հայտնի է Աղձնիքը պատմական Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերից է եղել՝ ուրույն մշակութակենցաղային հատկանիշներով, ուր հայ կյանքը հնագույն ժամանակներից հարատևել է մինչև Մեծ եղեռնի օրերը: Այդ տարածքը, որ հանդիսացել է հայ ժողովրդի կազմավորման հնագույն օրրաններից, ցավոք, ցայսօր ամբողջական ուսումնասիրված չէ ինչպես պատմաշխարհագրական, այնպես էլ ժողովրդագրական, ազգագրական առումներով: Մինչդեռ նման ուսումնասիրությունն այժմ առանձնահատուկ նշանակություն է ստանում, քանզի աղձնիքահայ բնակչության բեկորներն այսօր սփյուռքում և Հայաստանի հանրապետությունում տակավին պահպանում են մշակույթի, կենցաղի ու սովորույթների բազմաթիվ ինքնատիպ գծեր, որոնք արդեն իսկ ենթակա են մոռացության մատնվելու: Այս ամենն ահա հույժ անհրաժեշտ է դարձրել ուսումնասիրության առարկա ընտրել աղձնիքահայության պատմամշակութային կեցության խնդիրը:[1]

Մասնավորապես՝ ներկա հոդվածը նվիրված է Աղձնիքի հայոց վիճակագրությանը, էթնիկական կազմին XIX-XXդդ.:

Ինչպես հայտնի է XVIդ. երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիան, որի քաղաքական գերիշխանության տակ էր Արևմտյան Հայաստանը, այդ թվում և Աղձնիքի տարածքը, կայսրության ամբողջ բնատարածքի հետ մեկտեղ բաժանված էր նահանգների կամ կուսակալությունների (վիլայեթ): Յուրաքանչյուր նահանգ բաժանված էր մեծ կամ փոքր գավառների, որոնք կոչվում էին սանջակներ կամ լիվաներ, սրանք էլ, իրենց հերթին՝ գավառակների՝ կազաների, վերջիններս էլ գյուղախմբերի՝ նահիեների: 1639, 1834, 1864-67թթ. վարչաբնատարածքային բաժանումների համաձայն Աղձնիքի տարածքը մտնում էր Դիարբեքիրի և Վանի վիլայեթների մեջ, իսկ 1897թ. հետո այն կազմեց Դիարբեքիրի և Բիթլիսի նահանգների զգալի մասը: 27200 քառ. կմ տարածությամբ, 398700-ի հասնող բնակչությամբ Բիթլիսի կամ Բաղեշի նահանգը բաժանված էր Բիթլիսի, Մուշի, Սղերդի և Գենջի (Ճապաղջուր) սանջակների, վերջիններս էլ, 2007 գյուղերով՝ 17 գավառի և 30 գյուղախմբի:[2] Այդ տարածքն ընդգրկում էր պատմական Աղձնիք նահանգի Աղձն (Խարզան), Կեթիկ (Շիրվան), Տատիկ, Ազնվացձոր (Գյոզել-դերե),

Երխեթք կամ Մերխեթք (Սղերդ), Գզեղ (Մուտկան), Սալնաձոր (Բիթլիս), Սանասուն (Սասուն) գավառները, նաև՝ Տուրուբերան նահանգից ընդարձակ տարածքներ: Դիարբեքիրի նահանգը կազմում էր Դիարբեքիրի, Արղնիի, Մերդինի գավառները, որոնց մեջ մտնում էին 14 գավառակ, 58 գյուղախումբ՝ 3177 գյուղերով: Նահանգի ամենամեծ գավառն էր Դիարբեքիրը, որի մեջ մտնում էին Աղձնիքի Նփրկերտ գավառը կազմող Միլվան և Զոքան գավառակները՝ 223 գյուղերով և Բշերին՝ 173 գյուղերով[3], մնացածը կազմել են Ծոփքի և Հայկական Միջագետքի շրջանները:

Աղձնիքի բնակչության հիմնական զանգվածը կազմում էին հայերը: Այստեղ հնում բնակվում էին նաև հրեաներ և ասորիներ: Պարսկաբյուզանդական տիրապետության շրջանում Աղձնիքում են հաստատվում պարսիկներ և հույներ, իսկ արաբական տիրապետության շրջանում այդ տարրերին ավելանում են արաբներ: Արաբական արշավանքների շրջանում հայ բնակչությունը հարկադրված էր մասամբ թողնել հարթավայրային տաք շրջանները և քաշվել երկրամասի նախալեռնային և լեռնային շրջանները, որտեղ մինչև հայկական Մեծ եղեռնը տեղական բնակչության մեծամասնությունն էր կազմում: Բացի արաբներից, հատկապես սելջուկյան արշավանքներից հետո, Աղձնիքում հաստատվեցին նոր տարրեր՝ սելջուկ թուրքեր, քրդեր, որոնց թիվը մոնղոլական արշավանքից հետո ավելի մեծացավ: XV-XVI դարերից սկսած օսմանյան սուլթանները Պարսկաստանից պարբերաբար գաղթեցնում և այստեղ են բերում ռազմատենչ քրդերի, որոնց վրա դրվում էր թուրքական սահմանների պաշտպանությունը. դրա դիմաց քուրդ ցեղապետներին արտոնություններ ու առանձնաշնորհումներ էին տրվում: Նստակեցության և ազատ ապրելու պայմաններ ստեղծելով՝ թուրքական սուլթանները փաստորեն գայթակղում էին պարսկական քրդերին, նրանց բնակության վայր հատկացնելով Աղձնիքի հարավային շրջաններում[4], ինչպես նաև Բաղեշի շրջակայքում[5]: Վերջիններիս մուտքը Աղձնիք հատկապես ուժեղացավ օսմանյան Սելիմ Ա Աղեղ սուլթանի 1514թ. արշավանքից հետո:

XVIդ. օսմանյան օրենքներում քրդական քոչվոր ցեղերին իրավունք էր վերապահվում շարժվել իրենց հոտերի հետ ցանկացած ուղղությամբ: Թուրք կառավարողները նրանց միջոցով փորձում էին տարանջատել ու թուլացնել տեղական նստակյաց հայ բնակչությանը: Համաձայն Շերեֆնամեի, արդեն XVI-XVIIդդ. քրդական ցեղերը «յուրթլուկի, օջակլիկի ու հյուքումեթի» իրավունքներով ընդարձակ շրջաններ էին զբաղեցրել[6], որն այնուհետև վերածվեց քրդական հզոր իշխանության՝ Բիթլիս կենտրոնով:

Եկվոր ռազմատենչ այդ ցեղերն այստեղ ձեռք բերելով բնակության վայրեր և ազդեցության սահմաններ, առավել կամ պակաս չափով միմյանցից տարբերվում էին իրենց կողոպտելու և առևանգելու հակումներով, բարբարոս գործողություններով:[7] Քոչվոր ու ռազմատենչ ցեղերը վայրագորեն էին վարվում հպատակ դարձած հայ բնակչության հետ: Վերջիններս, հաճախ, թողնում էին ամեն ինչ, փախչում և ապաստան որոնում երկրի այլ շրջաններում:[8]

1877-78թթ. ռուս –թուրքական պատերազմից հետո այստեղ էին գաղթեցվում նաև այլ տարրեր՝ չերքեզներ, չեչեններ, լազեր, աջարներ[9], որոնց միակ զբաղմունքը դարձավ տեղական բնակչության կողոպուտն ու թալանը: Գոյության միջոցներից զուրկ ռազմատենչ այս ցեղերին հայաշատ վայրերում կենտրոնացնելը և նրանց զինելը այս դեպքում ևս թուրքական իշխանությունների քաղաքական ծրագրերից մեկն էր, որի նպատակն էր՝ մահմեդական բնակչության գերակշռություն հաստատելը:

Թուրքական կառավարության այդ քաղաքականության մասին Ռոլեն Ժեկմենը գրում է. «Ես չգիտեմ, կարելի՞ է արդյոք որևէ այլ այնպիսի երկիր, որի կառավարությունը այդպես ձգտեր իր սեփական պրովինցիաները լցներ վայրի հորդաներով և ինքը նրանց առաջ այդպիսի երկընտրանք դներ՝ կամ ապրիր թալանով ու կողոպտելով, կամ աղքատությունից ոչնչացիր: Թուրքիայի իշխանությունների վարքը ստիպում է մտածել, որ նրանց մեջ միտք է հղացել քայքայել և ոչնչացնել քրիստոնյա բնակչությանը, չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից»:[10]

«Թուրքիան,- նշում է Րաֆֆին,- ձգտում էր հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը, Հայաստանը լցնել քրդերով, չերքեզներով, լազերով ու աջարացիներով և այդ բոլոր վայրենի ցեղերի բարբարոսությունը գրգռել հայերի դեմ»:[11]

Աղձնիքի տարածքում բնակվող հայ բնակչության թվաքանակի մասին ճշգրիտ տեղեկություններ չունենք համապատասխան վիճակագրության, նաև տարածքում ընդգրկված բնակավայրերի ամբողջական ցանկի բացակայության պատճառով: Թուրքիայում, մանավանդ ասիական վիլայեթներում, մարդահամարը գրեթե անիրագործելի էր քուրդ թափառական, խաշնարած ցեղերի քոչվող կեցության պատճառով: Կարծում ենք՝ մեզ հայտնի արևմտահայ վիճակագրությունը չի համապատասխանում իրականությանը, քանզի ծանր հարկերի տակ կքված հայ ժողովուրդը նոր հարկերից ու տուրքերից խուսափելու համար փորձում էր ամեն ինչ թաքցնել՝ կայքը, հարստությունը, մարդահամարը: Թեև Արևմտյան Հայաստանում և, ընդհանրապես, ամբողջ Թուրքիայում, ընդհուպ մինչև XXդ. սկիզբը ճշգրիտ վիճակագրություն չի անցկացվել, այնուհանդերձ թուրքական պաշտոնական շրջանները մի քանի անգամ հրատարակեցին թվական տվյալներ, որոնք խիստ աղավաղված, միտումնավոր բնույթ էին կրում և հեռու էին արժանահավատությունից: Սուլթանական կառավարությունը քաղաքական հասկանալի պատճառներով փորձում էր գաղտնի պահել իրական դրությունը և ամեն կերպ պակաս ցույց տալ հայ բնակչության թիվը: Անհամեմատ ավելի վստահելի աղբյուր են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, ծխական քահանաների, գյուղական ուսուցիչների, տեղական ուսումնասիրողների վիճակագրական տվյալները, քան կառավարական, պաշտոնական աղբյուրները և նրանցից օգտված եվրոպական որոշ հեղինակների տվյալները: Թուրքական պաշտոնական աղբյուրներում՝ «սալնամեներում» զետեղված վիճակագրական տվյալները երկրի բնակչության իրական պատկերի հետ որևէ առնչություն չունեին, քանի որ Հայկական հարցի արծարծման առնչությամբ ոչ միայն 1890-ական թվականներին, այլև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կառավարության կողմից հայկական վիլայեթներում ոչ մի ստույգ մարդահամար չի անցկացվել: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Օսմանյան պետությունը մի անգամ միայն՝ 1844 թվականին պաշտոնական մարդահամար է կատարել, սակայն այդ մարդահամարը ևս եղել է թերի ու կամայական մոտեցմամբ: Հետագայում թուրքական կառավարությունները, մեկընդմեջ և անկանոն հրատարակել են «սալնամեներ», տարեգրքեր, որոնց պարունակած վիճակագրական տվյալները մեծավ մասամբ կռահումներ և ենթադրական թվեր են և հակասում են միմյանց: Քրիստոնյաների և հատկապես հայերի թիվը նվազեցնելու, իսկ մահմեդական բնակչության, մանավանդ թուրքերի թիվն ավելացնելու միտումն ավելի ակնառու է դառնում

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Բիթլիսի վիլայեթի բնակչության ստույգ վիճակագրության բացակայության վերաբերյալ ռուսական հյուպատոսարանի խորհրդական Լեյկոն 1913թ. գրում է. «Բիթլիսի վիլայեթի բնակչությունը, որը դեռ XIX դարի կեսերից անվանական թուրքական էր համարվում, անփույթ ցուցակագրությունների, ցուցակագրություններից խուսափելու և քրդական ամբողջ ցեղեր ցուցակագրելու անհնարին լինելու պատճառով, այդտեղի բնակչությունը ճիշտ որոշել չի կարելի»:[12] Բացի դրանից, թուրքական տվյալներում հայ բնակչության քանակը ներկայացնելու համար հիմք է ծառայել էթնիկական ցուցանիշը, իսկ թուրքերի ու քրդերի համար՝ կրոնական, այսինքն որպես մահմեդական տարր բոլոր աղբյուրներում, նաև դրանից օգտված օտար հեղինակների մոտ՝ թուրքերը և քրդերը ներկայացվել են առանց տարբերակման: Այս և այլ քաղաքական պատճառներով՝ եղած աղբյուրներից ավելի արժանահավատը Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալներն են, թեև այս տվյալները նույնպես պակասավոր են, քանի որ պատրիարքարանի ներկայացուցիչները երբեմն հնարավորություն չեն ունեցել թափանցել հայկական ու հայաբնակ բոլոր վայրերը,. գրանցել մահացությունները ու ծնունդները, մանավանդ որ, հայ ազգաբնակչությունը, ինչպես ասացինք, ջանացել է թաքցնել իր ճշգրիտ թիվը:

Հայ բնակչությունը, չնայած շարունակական արտագաղթերին, դավանափոխությանն ու ուծացմանը, Արևմտյան Հայաստանում, այդ թվում և Աղձնիքում, հատկապես մինչև 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմը, համեմատական մեծամասնություն էր կազմում: Հայերից հետո զգալի թիվ էին կազմում քրդերը և այնուհետև՝ թուրքերը:[13] Սակայն, 1880թ. հուլիսի 5-ին, այսինքն ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ միջազգային դիվանագիտության մեջ քննության առարկա դարձավ Հայկական հարցը, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Աբդին փաշան Եվրոպական տերությունների Կ. Պոլսի դեսպանների վերջնագրին տված պատասխանում հավաստիացնում էր, թե Արևմտյան Հայաստանում կա ընդամենը 780-800 հազար հայ, կամ ամբողջ ազգաբնակչության 17 տոկոսը, 4 տոկոսը կազմում էին այլադավան քրիստոնյաները, իսկ 79 տոկոսը՝ մահմեդականները:[14] Բայց ըստ դեռևս Բեռլինի կոնգրեսին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ներկայացրած տեղեկագրի՝ ամբողջ Թուրքիայում հայերը հաշվվում էին 3 միլիոն: Ընդ որում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում բնակվող 2062000 ընդհանուր բնակչության ազգային կազմը հետևյալ պատկերն էր ներկայացնում. հայեր՝ 1330000, թուրքեր՝ 530 հազար, քրդեր՝ 150 հազար, զանազան ցեղեր՝ 82 հազար:[15] Ըստ Հայոց պատրիարքարանի 1882թ. նոր լրացված և Բեռլինի կոնգրեսին մասնակից տերություններին ներկայացրած տեղեկագրի՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների հայ բնակչության թիվը կազմում էր 1630000 մարդ, որից Բիթլիսի վիլայեթում՝ 250 հազար, Դիարբեքիրի վիլայեթում՝ 150 հազար մարդ:[16] Գրեթե նույն բանն է հաստատում նաև բելգիացի նշանավոր իրավաբան Ռոլեն-Ժեկմենը, որը հայերին նվիրված իր աշխատության մեջ նշում է, թե 1870-ական թվականներին հայերի թիվը Թուրքիայում հասնում էր 3 միլիոնի[17], իսկ թուրքական պետական պաշտոնյա Սկրտիչ բեյ Դադյանի տվյալներով՝ 3400000-ի:[18] Այդ ժամանակաշրջանում Արևմտահայ բնակչությունը 3000000 էր կազմում նաև՝ ըստ Ա. Առաքելյանի:[19] Սակայն եվրոպական մի շարք ուսումնասիրողներ, մի կողմից՝ օգտվելով թուրքական կառավարութ-

յան պաշտոնական տվյալներից, մյուս կողմից՝ արտահայտելով իրենց տերությունների՝ Թուրքիայի հետ համերաշխվող շահերը, արևմտահայության թիվն անճիշտ ու միտումնավոր կերպով պակաս են ներկայացրել:[20]

Ինչ խոսք, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, սուլթանական կառավարության դաժան ռեժիմի, անլուր ճնշումների ու հալածանքների, կոտորածների ու ջարդերի, բռնի արտագաղթերի, հավատափոխության ու ուծացման պատճառով հայ բնակչությունը ոչ միայն չպետք է աճեր, այլև ընդհակառակը՝ անընդհատ և զգալի չափով պետք է նվազեր: Այդ հանգամանքները հիմք են տվել Ա. Համբարյանին եզրակացնելու, որ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայ բնակչության թիվը կրճատված կլիներ ավելի քան 1 միլիոնով:[21]

Չնայած պարբերաբար արտագաղթերին ու մասսայական կոտորածներին, հայերը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության համեմատական մեծամասնությունը: 1912թ. նրանք 6 վիլայեթներում կազմում էին ընդհանուր բնակչության 38,9 տոկոսը, մինչդեռ թուրքերը՝ 25,4, քրդերը՝ 26 տոկոսը, հույները, ասորիները, չերքեզները, պարսիկները և այլք՝ 9,7 տոկոսը:[22] Արևմտահայությունը 1912թ. պատրիարքարանի անցկացրած մարդահամարի տվյալներով կազմում էր 1 միլիոն 18 հազար մարդ, իսկ Ա. Համբարյանի ուշագրավ հաշվումներով՝ 1 միլիոն 400 հազար մարդ:[23] Սակայն եռիտթուրքերի կառավարության ներկայացրած տվյալների համաձայն հայկական 6 վիլայեթներում հայ բնակչությունը պատերազմի նախօրեին կազմում էր ընդամենը 20 տոկոս:

Այժմ փորձենք մեզ հայտնի աղբյուրների հիման վրա պարզել, թե որքա՞ն քրդեր էին ապրում հայկական վիլայեթներում և ինչպիսի՞ն էր նրանց հարաբերակցությունը հայ բնակչության նկատմամբ, մանավանդ մեզ հետաքրքրող երկու՝ Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում, որոնց զգալի մասը կազմում էր Աղձնիքի տարածքը: Բրոկհաուզի և Էֆրոնի՝ 1900թ. հրատարակված փոքր հանրագիտարանում քրդերի ընդհանուր թիվը 2,5 միլիոն է, որի կեսից ավելին ապրում էր Թուրքիայի սահմաններում:[24] Իսկ Ֆրեդ Դեվ. Գրինը նշում է. «Թուրքիայի քրդերի թիվը հասնում է 1.5 միլիոնի, որոնցից 600000-ը ապրում է Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, իսկ մնացածը՝ Խարբերդի, Դիարբեքիրի, Մոսուլի, Բաղդադի: Ենթադրվում է, որ մինչև 750000 քուրդ ապրում է Պարսկաստանում»:[25]

Իսկ ինչպիսի՞ն էր բնակչության կազմը XXդ. սկզբերին Աղձնիքի տարածքն ընդգրկող Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում: 1912թ. Հայոց պատրիարքարանի տվյալներով XIXդ. 80-90թթ. և XXդ. սկզբին հայ բնակչությունն զգալի չափով նվազում է հատկապես Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում: Այսպես, Բիթլիսի վիլայեթի հարյուրավոր ընտանիքների գաղթն է հավաստում Ա. Արփիարյանը[26], իսկ Սաֆրաստյան ազգանունով մի ճանապարհորդ հաղորդում է, որ հայերը Խութում ենթարկվելով քրդերի ավարառությունների, լքում են ամբողջ գյուղը և ցրվում կամ լեռները բարձրանում, իսկ նրանց տուն ու տեղին տիրանում են քրդերը՝ հայկական եկեղեցիները դարձնելով հարդի ու խոտի պահեստանոցներ:[27] «Տարիներ առաջ,- կարդում ենք մի այլ տեղ,- Մոտկանի գյուղերը 120-130 տներից էին բաղկանում, փոքր գյուղերը՝ 60-70, մինչդեռ հիմա առաջինը վերջինին հասած է»: «Պատմում են,- շարունակում է նույն հոդվածագիրը,- թե Մոտկանի Շեն գյուղը 500 տուն բնակիչ է ունեցել, 3 եկեղեցիներով, իսկ այժմ 6

տուն է մնացել»:[28] «Վանա լճի կողմն ընկնող վեց հայ գավառակների 2440 տունը 585 տան իջել է և 61 եկեղեցի կամ քանդվել են քրդերի ձեռքով կամ անժողովուրդ մնացել՝ փլած ու ամայի վիճակ ունին այսօր»:[29] Մ. Միրաքոբյանի հավաստմամբ՝ Սղերդ քաղաքում հայոց տնտեսությունները 500-600-ից հասել են 230-ի, Զոխ բնակավայրում, որը նույն Արզանն է, հայոց տնտեսությունների թիվը 200-ից կրճատվում է, հասնելով 80-ի: Հայերի փոխարեն այստեղ են հաստատվում 150 քրդական ընտանիք:[30] Ե. Մելիքյանը հավաստում է, որ Հարք գավառի շատ գերդաստաններ գաղթել են Սասունից:[31] Նույն բանը հավաստում է Բենսեն, որ նշում է, թե «Վերին Բուլանխա արևմտյան գյուղեր և քիչ բացառությամբ ամբողջ ներքին Բուլանխա բնակիչները՝ Բշերու, Սասնո, Խոյթա, Մոտկանա և Տարոնո գավառներու նախկին բնակիչներից են և սոցա լեզուն կպատկանի Տարոնո կամ Մշո գավառաբարբառին»:[32] Տիգրանակերտի մոտակայքում բնակություն էր հաստատել սասունցիների մի քանի հարյուր ընտանիք, որոնք մահմեդականություն էին ընդունել:[33] «Բաղեշեն և ուրիշ կողմերեն հասած գրությունները ալ նույնպես սոսկալի դժգոհությանց և այլ և այլ հարստահարությանց մանրամասն նկարագիրը կընեն, նկարագիր, որ ընթերցողին սոսկում կպատճառե: Բաղեշեն գրած նամակ մը կըսե նաև, թե տեղվոյն հայ ժողովուրդը՝ գործառած քրդական հարստահարությանց չկրնալով դիմանալ, այլուր գաղթելու կպատրաստվի»:[34] Արևմտյան Հայաստանի գավառներում և հատկապես պատմական Աղձնիքի տարածքում, ամեն քայլափոխում «կհանդիպենք բազմաթիվ գյուղերի՝ կանգուն եկեղեցիներով, նույնիսկ կանգուն տներով՝ անմարդաբնակ և ամայի ձգված իրենց բնակիչներից... որոնցում ամեն մի քար հայի նախնյաց արյան բծեր է կրում իր վրա, որտեղ ամեն մի քայլում ամայի ձգված գյուղերն ու վանքերը և ընդարձակ գերեզմանները հայի մոտիկ անցյալի անբարբառ վկաներն են»:[35] Այս ողբերգական գործընթացներից դառնացած Մ. Խրիմյանը գրում է, թե չկա աշխարհի վրա մի թշվառություն ազգի համար, քան թե հայրենազուրկ լինել: «Այսպես հայու հողեն քանդել կուզե հայոց արմատը, որպեսզի հետո ասե. «Ոչ հայ կա, ոչ Հայաստան» և այս կերպ փակե Արևելյան խնդիրը և պատասխան տա քրիստոնյա տերությանց»:[36] Դիարբեքիրի և Բիթլիսի վիլայեթների մեջ մտնող Աղձնիքի տարածքի հայ բնակչության գաղթի, հավատափոխության և ուծացման մասին առատ նյութ է պահպանված հայ պարբերական մամուլում և գրականության մեջ:

Ինչպես հայտնի է 1894-96թթ. Սասունի հայ բնակչությունը համառարած կոտորածի ենթարկվեց այն բանի համար, որ փորձել էր համախմբվել և միասնական ուժով ընդդիմանալ սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականությանը: Սասունում կողոպտվել, ավերվել ու հրդեհվել է ավելի քան 102 գյուղ ու ավան և կոտորածի ենթարկվել ավելի քան 10-12 հազ. մարդ:[37] Միաժամանակ Դիարբեքիրի վիլայեթում ավերվեց, հրդեհվեց 119 գյուղ, կոտորածի ենթարկվեց ու հայրենիքից վտարվեց 6000 ընտանիք:[38] 1904թ. Սասունը կրկին է ենթարկվում ավերի, կողոպուտի ու կոտորածի: Մաշտոցի անվան մատենադարանում է պահվում Տարոնի փոխառաջնորդ Վարդան վարդապետ Հակոբյանի զեկուցագիրը՝ ուղղված Կ. Պոլսի պատրիարքին, որում հիշատակվում է, որ մեկուկես ամսվա ընթացքում Սասունի բնակիչներից սպանվել են 7773 հոգի, այրվել 42 գյուղ՝ 2262 տնով:[39]

Այս ամենի հետևանքով, 1882թ. վիճակագրությամբ, 250000-ի փո-

խարեն Բիթլիսի վիլայեթի հայ բնակչությունը, 1912 թ. Հայոց պատրիարքարանի տվյալներով, կազմում էր 172 հազար, իսկ Դիարբեքիրի վիլայեթում՝ 100 հազար մարդ[40], ըստ Լեպսիուսի տվյալների՝ 196.000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 105 հազար:[41] Թեոդիկի «Տարեցոյց»-ի տվյալներով այդ ընթացքում հայ բնակչությունը Բիթլիսի վիլայեթում կազմում էր 198000 մարդ, Դիարբեքիրի վիլայեթում՝ 124000 մարդ:[42] Բերենք Աղձնիքի բնակչության վերաբերյալ թեև ոչ լրիվ, բայց կոնկրետ թվեր: Բիթլիսի վիլայեթի համանուն սանջակի 165000 ընդհանուր բնակչության ազգային պատկերն այսպիսին էր. հայեր՝ 115000, թուրքեր՝ 30000, քրդեր՝ 20000:[43] Բիթլիսի սանջակի մաս կազմող համանուն կազայում՝ «տաճիկներ՝ մոտ 8.000, քուրդերը բնակվում են 42 գյուղերի մեջ և կազմում 893 տուն կամ 3572 հոգի արական, հայք բնակվում են 26 գյուղերում (*իսկ մյուսներում խառը՝ Ռ. Ն.*) կազմում էին 2169 տուն կամ մոտ 8676 հոգի արական: Ընդամենը բոլոր մահմեդականների արական թիվը կազմում էր 11572, իսկ հայոցը՝ 8676: Սակայն այս թվերն էլ կասկածելի է,- շարունակում է Սկո կեղծանունով հոդվածագիրը,- քանի որ հայոց գյուղերի թիվը ոչ թե 26-ն է, այլ 40»:[44]

Բնականաբար առավել չափով ամայացել էին պատերազմի տարիներին Բիթլիսի վիլայեթի հայաբնակ շրջանները, որը երևում է նրանից, որ եթե համեմատաբար նվազ հայաբնակ Սղերդում մեկ քառակուսի կիլոմետրին բնակվում էր 9 մարդ, ապա Բիթլիսում և Մուշում, որտեղ բնակվում էր վիլայեթի հայության մեծ մասը՝ ընդամենը 5,4 մարդ:[45] Անգամ հայերով սակավացած Բիթլիսի վիլայեթի Սղերդի սանջակում հայ բնակչությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը. ըստ եվրոպացի մի դիտորդի 1837թ. հաշվումների, այստեղ ապրող 103 հազարից հայերը կազմում էին 30 հազար, թուրքերը՝ 50 հազար, քրդերը՝ 23 հազար մարդ, մինչդեռ 1890-ական թվականներին սանջակի հայության թիվը պակասում է մեկ երրորդով՝ հասնելով 20 հազարի: Կամ մեկ այլ փաստ՝ Սղերդում 1800-1837թթ. 17 հազար ընդհանուր բնակչությունից 10 հազարը կազմում էին հայերը, իսկ 1830-1850թթ. 15000 ընդհանուր բնակչությունից՝ 6 հազարը:[46] Նույն Բիթլիսի կազայի մեջ մտնող Գյուզել-դերե նահիեում հայ բնակչության թվաքանակն ուներ հետևյալ պատկերը. 339 ընտանիք, 1330 արական, 1129 իգական սեռի, ընդամենը՝ 2459 մարդ, իսկ քրդերը դարձյալ փոքրամասնություն էին՝ 283 ընտանիք, 886 արական, 775 իգական սեռի, ընդամենը՝ 1651 մարդ:[47]

Այս և այլ տվյալների համադրումը ցույց է տալիս, որ Բիթլիսի վիլայեթում մինչև Առաջին համաշխարհային պատերազմը հայերը կազմել են բնակչության 47,1, ասորիները՝ 3,9 տոկոսը, եզդի քրդերը՝ 1,3, բոլորը միասին՝ 52,3 տոկոս, շուրջ այնքան, որքան նվազել էր բնակչությունը պատերազմից հետո: Այսպես, 27100 կմ^2 տարածություն կազմող Բիթլիսի վիլայեթի նախապատերազմյան ընդհանուր բնակչության թիվը կազմել է 398000 մարդ, իսկ բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա՝ 14,69 մարդ: 1927թ. Թուրքիայում անցկացված մարդահամարի տվյալներով, վիլայեթի բնակչությունը 193064 մարդ էր կամ 204936-ով (53 տոկոս) պակաս նախապատերազմյան շրջանից, բնակչության միջին խտությունը՝ 14,69 մարդուց պակասել էր և դարձել 6,94 մարդ:[48]

Սակայն, ի տարբերություն Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթում հայերը համեմատական փոքրամասնություն են կազմել: 37500 կմ^2 տարածությամբ Դիարբեքիրի վիլայեթի ընդհանուր բնակչության թիվը, համաձայն Լեպսիուսի տվյալների, կազմել է 471.000 մարդ, որից 105000 հայ, 60000 ա-

սորի, 1000 հույն, ընդամենը, քրիստոնյաներ՝ 166000 մարդ: Քրդերը կազմել են մեծամասնություն՝ 200000, 63000 թուրք, 27000 ղզլպաշ, 10000 չերքեզ, 4000 եզդի, 1500 հրեա:[49] Այլ խոսքով, հայերն այս վիլայեթում կազմել են բնակչության 26,3 տոկոսը: Հայերը հատկապես կենտրոնացված են եղել Դիարբեքիրի սանջակում, որը գերազանցապես կազմել է Աղձնիքի Նփրկերտ գավառի տարածքը, ուր հայերը կազմել են բնակչության 33,8 տոկոսը:[50] Թե հայերն ինչ տեղ են բռնել այս վիլայեթի ընդհանուր բնակչության կազմում, երևում է նաև 1927թ. մարդահամարի տվյալներից: Դիարբեքիրի վիլայեթի բնակչության թիվը կազմել է 377787 մարդ, որը չհաշված բնակչության աճը, նախապատերազմյան 471500 մարդուց 93718 մարդով պակաս է:[51]

Հայ բնակչությունն Աղձնիքում համեմատական մեծամասնություն է կազմել նաև քաղաքներում: Այսպես, Բիթլիս քաղաքը թուրքական ուղեգրող Էվլիյա Չելեբիի վկայությամբ, 17-րդ դարի վերջին քառորդին ունեցել է 5000 տուն և 40000 բնակիչ:[52] 5000 տնից 1.500-ը պատկանել է հայերին, 2-3 հարյուրը՝ ասորիներին, մնացածը՝ քրդերին:[53] Հայոց ազգային պատրիարքարանի 1880թ. վիճակագրության համաձայն Բաղեշի հայկական ծխերի թիվը կազմել է 1532, 17226 շնչով: Այդ տվյալները գրեթե համընկնում են եվրոպացի մի վիճակագրողի՝ Վ. Քինեի 1892թ. հաշվումներին՝ 38886 մարդ, որից մահմեդականները՝ 20800, ասորիները՝ 1800, իսկ հայերը՝ 16285 մարդ:[54] Հայ տարրի թվաքանակի ավելացումը, ինչ խոսք, կապված է Բիթլիսի քրդական իշխանապետության վերացման հետ: Բիթլիսը նախապատերազմյան 40000-ի փոխարեն 1927թ. ուներ ընդամենը 9050 բնակիչ, և միայն 1965թ. բնակիչների թիվը հասավ 19000-ի:[55] Աղձնիքի տարածքի երկրորդ խոշոր քաղաքում՝ Սղերդում, 1800-1830թթ. 17000 ընդհանուր բնակչությունից 10000-ը եղել է հայ, իսկ 1830-50թթ. 15000 ընդհանուր բնակչությունից՝ 6000-ը:[56]

Այսքանից հետո որոշ պատմաբաններ իրենց աշխատություններում օգտագործելով ոչ հիմնավոր տեղեկություններ, հանգել են այն սխալ եզրակացության, թե Արևելյան Անատոլիայի վեց վիլայեթներում քրդերը բնակչության մեծամասնություն են կազմել: Նաև, անտեղյակ լինելով պատմական Հայաստանի սահմաններին, Քրդստանի մեջ են մտցրել ոչ միայն պատմական Աղձնիքի տարածքը, այլև գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը:[57] Դժբախտաբար նույն սխալները կրկնվել են նաև Ն. Ա. Խալֆինի աշխատության մեջ:[58] Եվ իրավացի է Մ. Շվոտը, երբ գրում է. «Չնայած այն բանին, որ մի քանի նորագույն աշխարհագրագետ Փոքր Ասիայում ցույց կուտան և Քուրդիստան անունով մի երկիր, բայց դա ոչ այլ ինչ է, եթե ոչ Նոր-Հայաստանի մի հարազատ մասը. միայն անիծված մետաղի և նույնպես անիծված պոլիտիկայի շնորհիվ է տեղի ունեցել այդ բառախառնությունը... Այնպես որ, խոսքս այսօրվա մասին լինելով «ստան» վերջավորությամբ բնորոշվող Քյուրդիստանը գոյություն չունի և չի էլ կարող գոյություն ունենալ, որովհետև մենք այսօր քրդեր ասելով կհասկանանք՝ բազմազան ցեղերի բաժանված և բազմապիսի հանգամանքներով իրարմե խորթացած, օտարացած և ընդհանուր ոչ մի ուշագրավ ներքին կապ չունեցող ուրույն-ուրույն ցեղեր և ոչ թե մի անբաժան ազգ, որ այսպես թե այնպես, իրավատեր լինել կարողանար այս կամ այն երկիրը իր հայրենիքը անվանելու կամ դարձնելու»:[59] Այդ մասին Ֆրեդ Դեվ. Գրինն իր աշխատության մեջ գրում է. «Քուրդիստան անվանումը, որով թուրքական կառա-

վարությունը փորձում է ծածկել Հայաստանի պատմական անունը, չի համապատասխանում ոչ քաղաքական, ոչ աշխարհագրական իրավիճակին, որովհետև նա վերաբերում է ավելի մեծ ընդարձակ տարածության, որտեղ ցրված են քրդերը»:[60]

Արևմտահայ հատվածի նոր պատմության ողբերգական դրվագներից ամենազարհուրելի՝ 1915թ. աղետի հետևանքով բարբարոսական եղանակներով ջարդերի ենթարկված, իր դարավոր հայրենիքից տեղահան արված հայ բնակչության ճակատագրին արժանացավ նաև Աղձնիքի բնակչությունը: Թեոդիկը նշում է, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Դիարբեքիրի վիլայեթի 124000 հայ բնակչությունից փրկվեց միայն 6000, իսկ Բիթլիսի վիլայեթի 198000 հայ բնակչությունից՝ 56300 մարդ, որոնք էլ սփռվեցին աշխարհի տարբեր կողմեր, իրենց հայրենի բնօրրանում մնալով չնչին բեկորներ՝ 3000 հայություն Դիարբեքիրի վիլայեթում և 300-400 մահմեդականություն ընդունած կանայք ու երեխաներ՝ Բիթլիսի վիլայեթում:[61] 1915թ. հունիսին անցկացված ցուցակագրության համաձայն Սասունից, ներառյալ Խութ-Բռնաշենը և Մոտկանը, փրկվեց 13400, իսկ Մշո դաշտից և Դիարբեքիրի շրջանից՝ 4-5 հազար մարդ:[62]

Կոտորածներից մազապուրծ աղձնիքահայերի բեկորները հանգրվան գտան ինչպես օտար ափերում, այնպես էլ Երևանում, Թալինի, Մասիսի, Աշտարակի, Էջմիածնի, Արտաշատի և Արարատի ենթաշրջաններում:

Հայկական ծագմամբ քրդական բնակչությունն Աղձնիքում

Հայերի սոցիալական, ազգային և կրոնաբարոյական ճնշման ուժեղացմամբ թուրքական կառավարությունը արագացնում էր նաև ուծացման գործընթացը: Դրան առաջինը ենթարկվում էր օտարների հետ խառը բնակեցված հայ բնակչությունը:

Աղձնիքի հայ բնակչության իսլամացումն իրականացվում էր դեռևս արաբական տիրապետության շրջանից սկսած: Ղ. Ինճիճյանը նշում է, թե Սլիվանու և Ռոժկանցի քրդերն իրենց համարում են Սլկունի և Ռշտունի հայ նախարարական տների հետնորդներ:[63] Սասունի բալաքցի անունը կրող քրդերը խոսում են արաբական քրդերեն և ըստ ավանդության հայ Պահլավունի նախարարության հետնորդներն են, որոնք արաբական արշավանքների տարիներին բռնի կերպով իսլամություն էին ընդունել, բայց նրանք շատ ծեսեր ու սովորություններ, նիստ ու կացը մնացել էր հայկական:[64] Ընդ որում, քրդական այդ աշիրաթը համարվում էր հայերի դաշնակիցը: Նրանք հաճախ միանում էին հայերի հետ ընդդեմ կառավարության և խստորեն տարբերվում էին հետագայում Աղձնիք թափանցած քրդական վաչկատուն-ավազակային մյուս ցեղերից, որոնք գարնանը և ամռանը իրենց հոտերով բարձրանում էին լեռները, ձմռանը՝ իջնում հովիտները:[65] Հետագա դարերի Աղձնիքի և մյուս արևմտահայ բնակչության մասին Ա. Ալպոյաճյանը նշում է, թե XI-XV դարերում հայերը՝ վաչկատուն նվաճողների «արշավուղիին վրա գտնվելու դժբախտությունը ունեին, իբրև շինարար և խաղաղասեր ժողովուրդ չկրցան հանդուրժել այս վայրենի հրոսներու հատուցած չարիքներուն: Շատերը վանված փոշիին պես չորս ծագերուն ցրվելով... շատերն ալ կքրդանային»:[66] Այդ նույնը վկայվում է Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ:[67] Տակավին XVIII դարում Բաղեշի մոլլան հրաման էր արձակել, թե երբ որևէ քրիստոնյա մահմեդականութ-

յուն ընդունի, ապա նրա բոլոր ազգականները պարտավոր են իրենց արու զավակներին հանձնել վերջինիս խնամակալությանը: Հրամանը ցնցել էր տեղի հայերին, որոնք մեծ կաշառքներով միայն կարողացել էին վերացնել հայաջինջ վերոհիշյալ որոշումը: Սակայն մոլլան այնպիսի ազգային թշնամանք էր սերմանել Բաղեշի հայերի, քրդերի ու թուրքերի միջև, որ կարճ ժամանակաշրջանում քաղաքի մեծաթիվ քրիստոնյա ընտանիքներից միայն 1500-ն էին կարողացել մնալ տեղում:[68]

Հայ բնակչության մահմեդականացումն ավելի մեծ չափեր ընդունեց 1880-90-ական թվականներին, երբ Սուլթան Աբդուլ Համիդի կառավարության հայաջինջ քաղաքականությունից խույս տալու համար հայ բնակչության մի զգալի մասը ստիպված էր հավատափոխվել, մոռացության մատնելով մայրենի լեզուն: Եվ քանի որ Աղձնիքի տարածքը մտնում էր քրդահպատակ շրջանների մեջ, հայ բնակչությունը հիմնականում քրդանում էր: Դիարբեքիրի և Բաղեշի վիլայեթների հայ բնակչության քրդացման մասին առատ նյութ է պահպանված պարբերական մամուլում[69] և գրականության մեջ: Բ. Ժամկոչյանը հավաստում է, որ Դիարբեքիրի վիլայեթում կային քրդացած հայկական գյուղեր:[70] Այդ նույն տարածքում հայ բնակչության քրդացման մասին պահպանվել է մի ուշագրավ վավերաթուղթ, որում ասվում է. «Տիգրանակերտի մոտակայքում բնակություն են հաստատել մի քանի հազար ընտանիքից բաղկացած սասունցիներ, որոնք անվանական տաճկության տակ բռնադատված հայեր էին և պարծանքով էին հիշում, թե իրենք սերած են Մամիկոնյան տոհմից: Նրանք շարունակում են գաղտնի խոսել հայերեն, հարգել հայ վանականներին, հաճախել հայոց վանքերը, իսկ մահմեդականություն ընդունելն առերես էր, հարկադրված»:[71] Դանիացի ճանապարհորդ Բենիգսենը նույնպես վկայում է այդ նույն տարածքում իր շրջագայած բնակավայրերում երկու հարյուր լուսավորչական գյուղերի մահմեդականացման մասին, և որ «հայոց եկեղեցիները մզկիթների փոխած՝ քահանաների տեղ մոլլաներ են երգում նրանց մեջ»:[72] 1896թ. մի հաղորդման մեջ նշվում էր, թե «Դիարբեքիրի կողմերում շատ հայ գյուղեր ամբողջովին բռնի իսլամություն են ընդունել և եկեղեցիներ ու վանքեր մզկիթ են դարձրել»:[73] Մեկ այլ վկայություն դեռ 1883թ. «Արձագանքում» նշվում է, որ Խիզանի, Մոտկանի, Շատախի հայ բնակչության զգալի մասը քրդացել է:[74] Նույն բանը հավաստվում է Սղերդի գավառի հայ բնակչության վերաբերյալ:[75] Աղձնիքի հովտային մյուս շրջաններում ուծեցման պրոցեսն ավելի լայն ծավալ էր ընդունել. այդտեղ «հայերի մեծ մասը քրդացել էր նաև թուրք իշխանության բացակայության պատճառով: Ասոնք քրդանալուն պես կը լինին հավասարազոր և հավասարապատիվ, կազատվին հալածանքներէ ու կը պահպանեն իրենց հողն ու տնտեսությունը»:[76] Նույն հեղինակն անդրադառնում է նաև Խութի, Սասունի և Տիգրանակերտի շրջաններում հայ բնակչության զգալի մասի քրդացմանը: Սասունում և Աղձնիքի մյուս շրջաններում զգալի թիվ էին կազմում քրդացած հայերը, հաճախ քողարկված ձևով պահպանելով հայերի հավատքը:[77] «Մուրճ»-ում տպագրված Սեյլանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ մի շարք քրդական ցեղեր, որոնք բնակվում են Աղձնիքի տարբեր շրջաններում, ոչ միայն ունեն հայկական ծագում, այլև «1870-72թթ. կամեցան հայանալ, թոթափել դիմակը, միանալ ազգին»:[78] Քրդերը Բարունակ պեյ ֆերուհիանի հավաստմամբ, երկու մասի էին բաժանվում՝ վրանաբնակ և նստակյաց: Քոչվորները կրում էին իրենց նախահոր կամ աշիրաթի ավագի անունը, իսկ նստակ-

յացները՝ բնակավայրի: Ընդ որում նրանց մեծ մասը, ըստ հեղինակի, ունեն հայկական ծագում:[79] Այս երևույթներին լավատեղյակ ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը վկայակոչում է, որ 1870-90-ական թվականներին հարյուր հազարավոր հայեր բռնի ճանապարհով «կը մահմեդականացվին, հարյուր հազար կիներ, դեռատի աղջիկներ կառևանգվին և կը ղրկվին հարեմները»:[80] Բելգիացի նշանավոր իրավագետ Ռոլեն Ժեկմենը նկատի ունենալով 19-րդ դարի 80-ական թվականները, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության հարկադրական դավանափոխության մասին գրում էր. «Հայաստանում ապրող մահմեդականների մի մասը հայկական ծագում ունի: Շատ տեղերում նրանք տակավին պահում են իրենց ազգի լեզուն, բարքերն ու սովորույթները, հաճախ կարելի է հանդիպել այնպիսիների, որոնք դեռ կրում են իրենց հայրերի կամ նախնիների անունները»:[81]

Գրականության և արվեստի թանգարանում պահվում է մի վավերագիր, որում ասվում է, թե Տիգրանակերտի մոտակայքում բնակություն էր հաստատել սասունցիների մի քանի հարյուր ընտանիք, որոնք մահմեդականություն էին ընդունել:[82]

Ընդհանրացնենք. իր հայաջինջ քաղաքականությունը կենսագործելու համար օսմանյան պետությունը գործադրում էր ինչպես սոցիալական ու ազգային, կրոնաբարոյական ճնշման ուժեղացման, հարկերի ու տուրքերի եռապատկմամբ, անողոք հարստահարման հողազրկմամբ արտաքսման, բռնի իսլամացման, այլև մասսայական կոտորածի ենթարկելու մեթոդները: «Ղուրանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը, - գրում է Կ. Մարքսը,- աշխարհագրությունը հանգեցնում է երկու կեսի՝ ուղղահավատների և անհավատների պարզ ու հարմարին ֆորմուլին: Անհավատը գյավուրն է, նա թշնամի է: Իսլամն անիծում է ազգը և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»:[83]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Նահապետյան Ռ. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004:

[2] Տե՛ս «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչյան Ազգային հիվանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1903, էջ 189-191:

[3] Անդ, էջ 189-191, Սրվանձտյանց Գ. Երկեր, հ. 2, Երևան. 1982, էջ 444-452:

[4] Տե՛ս Շահպազեան Հ. Քուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 57-58, Никитин В. Курды, М., 1964, стр. 240-247.

[5] Տե՛ս «Արձագանք», 1882, 35, էջ 541: Туманский А. Г. Очерк района Эрзрумского и Битлисского вилайетов, Тифлис, 1909, с. 31. Տոմաշեկ Վ. Սասուն և Տիգրիսի Աղբերաց սահմանները, թարգմանեց Պիլեզիկճյան, Վիեննա, 1896, մ. Ա, էջ 11, 54, 289:

[6] Տես՝ Chépef-nâmeh ou historie des Kourdes har Chépef, prince de Bidlis, poubliée par V. Veliaminof-Zern, texte persan, h. II, SPB, 1860-1882, էջ 164:

[7] Ա-Դո. Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 251:

[8] Ռաֆֆի. Երկեր, հ. 4, Երևան, 1956, էջ 377-378:

[9] Չերքեզներն ամենից շատ հաստատվեցին Դիարբեքիրի նահանգում՝ 10 հազար մարդ, իսկ չեչենները՝ նույն տարածքում՝ 70 ընտանիք (տե՛ս «Ազատամարտ», 1909, թիվ 67):

[10] Ролен-Жекмен М. Г. Армения, армяне и трактаты, перевод с французского, М., 1896, стр. 62-63.

[11] Տե՛ս Ռաֆֆի. Տաճկահայք, Թիֆլիս, 1895, էջ 71:
[12] Տե՛ս "Известия Министерства иностранных дел", 1913, Б. кн. II, стр. 117:
[13] Տե՛ս Карлайл Мак-Коан. Наш новый протекторат, Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884, стр. 103.
[14] Տե՛ս "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.", М., 1896, стр. 94. Հմմտ "Сборник географических, топографических и статистических материалов по Азии", СПв, вып. 62, стр. 28-29.
[15] «Մշակ», 1878, N 10: Հմմտ Խաչանասյան Երվանդ. Հայոց թիվը, Հրատարակություն եղեռնի 50-ամյակի կենդ. հանձնախմբի, 1965, էջ 11: *Այստեղ նշվում է, որ ըստ 1844թ. սալթանական սալնամեների, ավստրիացի հայտնի վիճակագրող Ֆրաներ ֆոն Ռեդէնի 1876թ. տվյալների, ֆրանսիացի ականավոր աշխարհագիր Ս. Ուրիչինի «Օսմանյան կայսրության ներկա վիճակը» գրքի՝ հայ բնակչությունը կազմում է 2400000-2500000 մարդ, թուրքերը՝ (ասիական մասում) 3600000, քրդերը՝ 1000000* (տե՛ս նույն տեղում էջ 8):
[16] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-70թթ., Երևան, 1955, էջ 35. տե՛ս նաև «Արարատ», Էջմիածին, 1914, N 9, էջ 811: *Այստեղ նշվում է, որ Վանի վիլայեթում ապրում էին 400000, Բաղեշում՝ 250000, Դիարբեքիրում՝ 150000, Էրզրումում՝ 280000, Խարբերդում՝ 270.000, Մերաստիայում՝ 280000 մարդ:*
[17] Տե՛ս Ролен-Жекмен М. Г., նշվ. աշխ.:
[18] Տե՛ս Мкртич-вей Далиан. Армяне Оттоманской империи, перевод с французского, Тифлис, 1878, стр. 8.
[19] Аракелян А. А. Статистика армянского населения Малой Азии. Известия Кавказского отдела императорского русского географического общества, Тифлис, 1914, т. 22, вып. 2, стр. 121-125.
[20] *Ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինեն 1892-95թթ. հենվելով թուրքական «սալնամեների» վրա, ցույց տվեց, որ Օսմանյան կայսրության մեջ ապրում են 1369644 հայ, որից 1169644-ը ասիական, իսկ 200000-ը՝ եվրոպական մասերում (Տե՛ս «Մուրճ», 1906, N 10, էջ 79), որ Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում բնակվում են 653000 հայ, որից Բիթլիսի վիլայեթում՝ 126000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 89000 հոգի* (Տե՛ս Сборник географических, топографических и статистических материалов по Азии, вып. 62, стр. 25-26): *Անգամ եղան մարդիկ, օրինակ, զինվորական Ավերիանովը, որ ելնելով ցարիզմի և Աբդուլ Համիդի միջև ստեղծված բարեկամական հարաբերություններից, կրկնում էին թուրքական կառավարող շրջանների պնդումը և հաստատում հայերի փոքրաթիվությունը Արևմտյան Հայաստանում, ավելին՝ առաջարկում էր Հայաստան անունը փոխարինել Քրդստանով, քանի որ ըստ նրա Օսմանյան կայսրության Հայաստան կոչված մասում քանակապես գերակշռում են քրդերը: Նա գրում է. «Հայաստան անունը այդ շրջանի բնակչության ցեղային կազմով չի արդարացնում իրեն: Այն ազգագրական մեծ հիմքով կարելի է անվանել Քրդստան»* (Տե՛ս Аверьянов П. А. Этнографический и военно-политический овзор азиатских владений Оттоманской империи, СПв., 1912, стр. 17):
[21] Համբարյան Ա. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 105:
[22] Տե՛ս "Сборник дипломатических документов", Реформы в Армении, Петроград, 1915, стр. 289:
[23] Տե՛ս Համբարյան Ա. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, էջ 106, 111: *Ամբողջ Թուրքիայում, համաձայն 1914թ. Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի տվյալների, հայերի թիվը կազմում էր 2680000 մարդ, իսկ ըստ ֆրանսիացի հրապարակագիր Մորիս Պերնոյի «Թրքական հարցը» գրքի՝ 2500000, ըստ ամերիկացի հեղինակ Ջ. Գուտմենի արևմտահայության թիվը կազմում էր 1500000*

մարդ (տե՛ս Խաչանասյան Եր. նշվ. աշխ. էջ 18: Ըստ նույն հեղինակի՝ հայերի թիվն ամբողջ Թուրքիայում կազմում էր 2,5 միլիոն մարդ):

[24] Տե՛ս "Малый энциклопедический словарь", 1900, II, стр. 1332:

[25] Տե՛ս "Положение армян в Турции", стр. 254:

[26] «Մշակ», 1899, 86:

[27] «Հանդէս ամսօրեայ», 1933, էջ 610:

[28] «Լումա», Թիֆլիս, 1887, գ. Ա, էջ 165, 1900, գ. Ա, էջ 215-216:

[29] Մ. Ա. Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսէյլ, 1880, էջ 8:

[30] Միրախորյան Մ. Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գավառս Արևելեան Տաճկաստանի, մ. Ա, Կ. Պոլիս, 1889, էջ 64, 74:

[31] Մելիքյան Ե. Հարք-Խնուս, Անթիլիաս, 1964, էջ 31:

[32] Բենսե. Բուլանըղ կամ Հարք գավառ, ԱՀ, գ. Ե, 1889, էջ 35:

[33] ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 43:

[34] Մաշտոցի անվան մատենադարան, Իզմիրյանի արխիվ, թղթ. 4, վավ. 521:

[35] Տե՛ս Սասուն, նրա նկարագրությունը, բնակիչները և նոցա բարքը ու վարքը («Արաքս», 1894-95, գ. Ա, էջ 66-67):

[36] Տե՛ս Լազյան Գ. Հայաստան և հայ դատը (վավերագրեր), Փարիզ, 1946, էջ 119:

[37] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ер., 1982, с. 40, 136.

[38] Անդ:

[39] Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 237, վավ. 18, թ. 53-54: Տե՛ս նաև Պողոսյան Հ. Մ. Սասունի պատմություն, Եր., 1985, էջ 265: Հմմտ. Համբարյան Ա. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, էջ 104: Կարապետյան Ն. Վ. 1904թ. Սասունի ինքնապաշտպանությունը, «Հայ ժողովրդի պատմ.», հ. 6, Եր., 1981, էջ 476:

[40] Տե՛ս «Արարատ», 1914, թիվ 1, էջ 49, թիվ 2, էջ 132:

[41] Геноцид армян в Османской империи, с. 391. Սահարոնյան Գ. 1915-1965: Հուշամատյան մեծ եղեռնի, Պեյրութ, 1965, էջ 400:

[42] Տե՛ս Թեոդիկ. Ամենուն տարեցոյց, Կ. Պոլիս, ԺԶ տարի, 1922, 261-263:

[43] Մ. Ա. Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսէյլ, 1880, էջ 3:

[44] «Արծագանք», 1882, ? 35:

[45] Տե՛ս Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, հ. V, Երևան, 1979, էջ 37-38:

[46] Մ. Ա. Թուրքիայի հայերն և իրենց դրացիները, Մարսէյլ, 1880, էջ 3:

[47] «Արծագանք», 1882, ? 20, էջ 278-280:

[48] Տե՛ս Գալստյան Հ. Հ. Թուրքիայի արևելյան վիլայեթների դեմոգրաֆիայի և տնտեսության մի քանի հարցեր (Առաջին համաշխարհային պատերազմից հետո), «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. 10, Եր. , 1979, էջ 36-37:

[49] Տե՛ս Հուշամատյան մեծ եղեռնի, էջ 400:

[50] Տե՛ս Մ. Ա. Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները..., էջ 3:

[51] Տե՛ս Գալստյան Հ. Հ. Թուրքիայի արևելյան վիլայեթների դեմոգրաֆիայի և տնտեսության մի քանի հարցեր, էջ 36, թիվ 1 աղյուսակը:

[52] Տե՛ս Թուրքական աղբյուրներ..., հ. Գ, Էվլիյա Չելեբի, Եր.,1967, 198:

[53] Տե՛ս Ինճիճյան Ղ. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, էջ 172:

[54] Տե՛ս Էփրիկյան Հ. Ս. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1903-1905, էջ 379:

[55] Տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. X, էջ 43:

[56] Տե՛ս Ա-Դռ. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 153-154:

[57] Лазарев М. С. Курдистан и курдская проблема, М., 1964.

[58] Халфин Н. А. Борьва за Курдистан.- Курдский вопрос в международных отношениях XIX в., М., 1963.

[59] Շվոտ Մ. Տ. Քրդերը Տաճկաց Հայաստանում (ազգագրական նյութեր), Ս. Պետերբուրգ, 1905, էջ 20-21:

[60] Гринь Фор. Армянский кризис и владычество Турок (Сасунская резня), "Положение армян в Турции", стр. 254.

[61] Թեոդիկ. Ամենուն տարեցույց, ԺՉ, էջ 261-263: Հուշամատյան Մեծ եղեռնի, էջ 219:

[62] Սասունի Կ. Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրութ, 1966, էջ 112:

[63] Տե՛ս Ինճիճյան Ղ. Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա, էջ 52:

[64] Տե՛ս Սասուն, նրա նկարագրությունը, բնակիչները և նոցա բարք ու վարքը, էջ 84: Հմմտ Ա. Քալանթար, Սասուն, Թիֆլիս, 18, էջ 22, «Արծագանք», 1894, [1] 118:

[65] Տե՛ս «Մշակ», 1894, [1] 118, Հմմտ «Լուսայ», 1897, գ. Բ, էջ 132-133:

[66] Տե՛ս Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ գաղթականության, մ. Բ, Գահիրե, 1955, էջ 272:

[67] «Լուսայ», 1897, գ. Ա, էջ 173: *Այստեղ նշվում է, որ Սասունում Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ բռնկված սովի պատճառով մեծ թվով հայեր էին քրդանում:*

[68] Տե՛ս Ալպոյաճյան Ա. Պատմական Հայաստանի սահմանները, էջ 144, հմմտ. Լեո. Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 734:

[69] «Մուրճ», 1885, N 7, էջ 948-961, «Մշակ», 1897, դ 25, «Դրոշակ», 1901, [1] 2, էջ 25:

[70] Ժամկոչյան Բ. Հայնի, Պեյրութ, 1952, էջ 22:

[71] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 42, 50:

[72] «Հնչակ», 1902, N 1, էջ 5:

[73] «Դրոշակ», 1896, N 18, էջ 143:

[74] «Արծագանք», 1883, N 3, էջ 38:

[75] «Արծագանք», 1883, N 41, էջ 583:

[76] Շահպազյան Հ. նշվ. աշխ., էջ 170-171:

[77] «Մուրճ», 1895, N 7, էջ 949: Հմմտ. Սկրտչյան Թովմաս Գ. Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քյուրդերու գազանությունները, Գահիրե, 1919, էջ 121-123: *Հեղինակը նշում է, թե Բշերի, Սլիվանի շրջանների քրդական աշիրեթներից շատերն իրենց ծագումով հայեր են եղել, բայց ամբողջ XIX դարում և XX դարի սկզբներին նրանց պահպանած սովորությունների մեծ մասը բուն հայկական էին և թվարկում է դրանք մանրամասնորեն: Այսպես, օրինակ, նրանցում պահպանվում էին մինչև հիմա հետևյալ անունները՝ «մալա մղթրան» - տուն եպիսկոպոսի», «մալա Քեշե» - տուն տերտերի, «մալա Մղչո». - տուն Սկրտչի, «մալա Գլո» - տուն Գալուստի, «մալա Մղը» - տուն Մելքոնի, «մալա Միքո» - տուն Միքայելի, «մալա Օնո» - տուն Հովհաննեսի, «մալա Ֆլա» - տուն Քրիստոսի և այլն: Նրանց հավատքին անդրադառնալով նշում է, թե քուրդ կանայք երեսները արևածագին խաչակնքում են՝ «Հիսուս Քրիստոս» ասելով: Նոր տարին հայկական սովորություններով են նշում, Հարության Ս. Զատկին կարմիր հավկիթ են ներկում: Հարկ են տալիս հայոց ուխտավայրերին՝ Մշո Ս. Կարապետին, որը կոչվում է «Տերա Զէնկելի» և «Խանա-փուքրքէ», ուր ուխտի են գնում երկուղած հավատքով և ընծաներով, հայերի հետ միասին և այլն: Խալդա աշիրաթն Ռանվանի շրջակայքում, իսկ Սլեվ և Զրորքա երկու գլխավոր աշիրաթները, որոնք բնակվում են 64 գյուղերում, Սինքրա, Ռեզպան աշիրաթների 25 ամենամեծ ու շեն գյուղերի բնակչությունը, ըստ Թովմաս Սկրտչյանի, ծագումով հայ են* (նույն տեղում, էջ 120-121):

[78] «Մուրճ», 1894, 11-12, էջ 1637, 1664: Հմմտ Կալիոկեցի Պ. Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս, Կ. Պոլիս, 1881, էջ 84-86:

[79] Տե՛ս Բարունակ պեյի Ֆերուհիսան. Ճանապարհորդութիւն ի Բարեղոն, յԱրմաշ, 1876, էջ 53: *Այստեղ ասվում է, թե Աղձնիքի տարբեր շրջաններում բնակվող մանրքեցի անունով քրդերը՝ Մամիկոնյան, Սլիվանցիք՝ Սլկունի, Ռշկոթանցիք՝ Ռշտունյաց հայ նախարարական տներից են ծագում:*

[80] Ժակ դը Մորգան. Հայ ժողովրդի պատմությունը, Պոստոն, 1947, էջ 346:

[81] Ролен-Жекмен М. Г., նշվ. աշխ., էջ 10:

[82] ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 43:

[83] Маркс К. и Энгельс Ф. Соч., т. X, стр. 6.

Резюме

Этнический состав населения Ахдзника в XIX-XX веках.

Рафик Наапетян

В статье рассматривается вопрос о составе населения края Ахдзник в конце XIXв. начале XXв.

Как свидетельствуют первоисточники, кроме основной части населения – армян, в разные времена в Ахдзнике поселяются ассирийцы, греки, арабы, а позднее – тюркские племена и курды. После русско-турецкой войны 1877-78гг. здесь поселяются и черкезы, чечены, лазы и аджары. На основе фактического материала есть свидетельство того, что часть курдских племен имели армянское происхождение.

Указано, что турецкие официальные данные не отражают истинную картину о составе населения. Турки, из-за политических соображений намеренно уменьшали число проживающих здесь армян. Потому – более точными являются данные Константинопольской епархии. Турецкие официальные круги, с усилением социального, национального и религиозно-морального гнета, пытались ускорить процесс ассимиляции. Этому, в первую очередь подвергалось население Ахдзника.

Summary

Ethnic Structure of the Population of Aghdznik in the XIX-XX Centuries.

Rafik Nahapetyan

The administrative division of the territory at the end of the XIX century and the beginning of the XX century is examined in this article. It is shown that the Armenians in Aghdznik formed majority. Primary sources testify that Assyrians, Persians, Greeks, Arabians settled here at different times and later the Turkish tribes and Kurds also settled here. Making use of the support of the Ottoman State the Kurds established their domination. After the Russo-Turkish War in 1877-78 the Circassians, Lazes, Chechens and Adzharians migrated here and their occupation became robbery and burglary.

The author refers to the number of the Armenian population and states that because of the high taxes the Armenians didn't show the real number, the Turks tried to falsify the number because of political purposes. The real picture of the Ethnic structure of the population is relatively exactly given by the Armenian Patriarchate is Constantinople. According to it the Armenians formed majority in the vilayet of Bitlis. The documents testify that some of the Kurdish tribes had Armenian origin. Strengthening the social, national, religions, ethnic pressure of the Armenian population the Turkish government precipitated the process of estrangement. The Armenians of Aghdznik were the first to undergo the process, as they lived among the foreigners. Documental proofs of forced conversion and becoming Kurds are given in the article.